ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ - 24

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնքի գլխավոր հատակագծում առանձին հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 54-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնքի գլխավոր հատակագծում հետևյալ փոփոխությանը.

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
07-064-0398-0009 կադաստրային ծածկագրով 0.35 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողեր /համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողեր/	07-064-0398-0009 կադաստրային ծածկագրով 0.35 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը հողամասի նպատակային նշանակությունը փոխելու առաջարկության վերաբերյալ առարկություններ չունի՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերության կողմից ներկայացված պահանջը ապահովելու պայմանով, ըստ որի՝ հողամասի դիմային հատվածով 2 մ հեռավորությամբ անցնում են «Քանաքեռավան» 10կվ, իսկ երկայնական սահմանով՝ «Առինջ» և «Հրազդան» 10կվ լարման երկշղթա օդային գծերը:

4. Քանաքեռավան համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել՝ ՀՀ Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնքի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ա. Ղուլարյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ. Դավթյան

Երևան, «25» «հունվարի» 2022 թ.